# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2013 թվականի N 77 - Ա

ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 6-րդ հոդվածի 1-ին կետերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 973-Ն որոշման 4-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Գորիս քաղաքում զբոսաշրջության զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Ծրագրում ներառված միջոցառումների իրականացման պատասխանատու հանրապետական գործադիր մարմինների և տարածքային կառավարման մարմինների ղեկավարներին՝ Հայաստանի Հանրապետության 2014-2016 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերում, յուրաքանչյուրն իր մասով, նախատեսել ծրագրի միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2013 թ. փետրվարի 6
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունվարի 31-ի N 77 - Ա որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

| NN ը/կ | Գործողությունները | Ակնկալվող արդյունքը | Պատասխանատուն | Ֆինանսավորման աղբյուրը | Ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | Գորիս քաղաքի պատմական տարածքի և նրա առանձին հատվածների վերականգնում և օգտագործում | պատմական կենտրոնի վերականգնման աշխատանքների մեկնարկ՝<br><br>հին ամֆիթատրոնի վերականգնում՝ ժամանակակից հոլոգրաֆիկ «գույն-լույս-ձայն» թատրոնի հիմնում<br><br>պատմամշակութային հուշարձան - տների արտաքին տեսքի բարելավում<br><br>պատմական թաղամասերի վերականգնում<br><br>գյուղ-ազգագրական թանգարանի հիմնում<br><br>քաղաքում տեղեկատվական | Գորիսի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br><br>Սյունիքի մարզպետարան<br><br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br><br>ՀՀ մշակույթի նախարարություն<br><br>Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ (համաձայնությամբ)<br><br>ՀՀ էկոնոմիկայի | համայնքային բյուջե<br><br>ՀՀ պետական բյուջե<br><br>օրենքով չարգելված այլ աղբյուրներ | սկսած 2014 թվականից |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | | վահանակների և ուղորդող ցուցանակների տեղադրում<br><br>պատմական կենտրոնը Հին Գորիսին միացնող ճանապարհների, մի խումբ ջրաղացների և կամուրջի վերականգնում | նախարարություն | | |
| 2. | Գորիս քաղաքի մրցունակ զբոսաշրջային արդյունքի ձևավորում | զբոսաշրջային ռեսուրսների գույքագրում, վերլուծություն, տվյալների բազայի ստեղծում<br><br>տվյալների բազայի հիման վրա մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ պահանջարկին համապատասխանող, մրցունակ զբոսաշրջային արդյունքների ձևավորում, քաղաքային տուրերի մշակում | Գորիսի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br><br>Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ (համաձայնությամբ)<br><br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | ՀՀ պետական բյուջե<br><br>օրենքով չարգելված այլ աղբյուրներ | սկսած 2013 թվականից |
| 3. | Գորիս քաղաքի, որպես գրավիչ և բարենպաստ զբոսաշրջավայրի նկարագրի ձևավորում, ներքին և միջազգային շուկայում պատշաճ ներկայացում | Գորիս քաղաքի զբոսաշրջային գրավչությունները ներկայացնող գովազդատեղեկատվական նյութերի (բրոշյուրներ, քարտեզներ և տեսանյութեր) պատրաստում և տարածում<br><br>Գորիս քաղաքի ներգրավում օտարերկրյա լրագրողների համար կազմակերպվող ճանաչողական այցերում | Գորիսի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br><br>Սյունիքի մարզպետարան<br><br>Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ (համաձայնությամբ) | ՀՀ պետական բյուջե (զբոսաշրջությանն աջակցություններ ծրագրի 2013-2015 թթ. համար նախատեսված չափաքանակների շրջանակներում)<br><br>համայնքային | սկսած 2013 թվականից |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | | զբոսաշրջային արդյունաբերության համար ցուցահանդես- սեմինարի անցկացում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | բյուջե<br>օրենքով չարգելված այլ աղբյուրներ | |
| 4. | Զբոսաշրջային գրավչության օբյեկտների արդյունավետ օգտագործման ապահովում | կառավարման բարեփոխումներ՝ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ զբոսաշրջության համակարգող խորհրդի ստեղծում<br>քաղաքի բրենդի մշակում<br>«Զանգեզուր» տեղեկատվական կենտրոնի գործունեության ապահովում<br>ինտերնետային կայքի ստեղծում<br>մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ Գորիս քաղաքի զբոսաշրջային գրավչության օբեկտները զբոսաշրջային փաթեթներում առավել արդյունավետ ներգրավումն ապահովող միջոցառումների մշակում և իրականացում | Գորիսի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br>Սյունիքի մարզպետարան<br>Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ (համաձայնությամբ)<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ մշակույթի նախարարություն | ՀՀ պետական բյուջե (զբոսաշրջությանն աջակցություններ ծրագրի 2014-2016 թթ. համար նախատեսված չափաքանակների շրջանակներում)<br>օրենքով չարգելված այլ աղբյուրներ | սկսած 2014 թվականից |
| 5. | Գորիս քաղաքը դարձնել ավանդական փառատոնների անցկացման կենտրոն | «Սյունյաց ավանդույթներ» ամենամյա փառատոնի կազմակերպում և անցկացում | Գորիսի քաղաքապետարան (համաձայնությամբ) | ՀՀ պետական բյուջե (զբոսաշրջությանն աջակցություններ | 2014-2016 թթ. |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | | | Սյունիքի մարզպետարան<br>Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ (համաձայնությամբ)<br>ՀՀ մշակույթի նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | ծրագրի 2014-2016 թթ.համար նախատեսված չափաքանակների շրջանակներում)<br>համայնքային բյուջե<br>օրենքով չարգելված այլ աղբյուրներ | |
| 6. | Գորիս քաղաքում ենթակառուցվածքների բարելավում և զարգացում | հյուրանոցային տնտեսության օբյեկտների համապատասխանեցնում ՀՀ կառավարության սահմանած որակավորման կարգի պահանջներին<br><br>զբոսաշրջային տների ցանցի ձևավորում և զարգացում | Գորիսի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | համայնքային բյուջե<br>օրենքով չարգելված այլ աղբյուրներ | 2013-2016 թթ. |
| 7. | Գորիս քաղաքի տրանսպորտային համակարգի բարելավում | տրանսպորտային համակարգի ուսումնասիրություն և դրա բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացում:<br><br>դեպի զբոսաշրջային գրավչության վայրեր տանող ճանապարհների նորոգում և կահավորում (տեղեկատվական ցուցանակ- | Գորիսի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | համայնքային բյուջե<br>օրենքով չարգելված այլ աղբյուրներ | սկսած 2013 թվականից |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | | ների տեղադրում)<br><br>պատմական կենտրոնում հետիոտնային պողոտայի հիմնում | | | |
| 8. | Զբոսաշրջության ոլորտում մարդկային ռեսուրսների զարգացում | զբոսաշրջության ոլորտի մասնագետների համար սեմինարների կազմակերպում, մասնագետներ վերապատրաստողների վերապատրաստում (ToT) | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>Գորիսի քաղաքապետարան (համաձայնությամբ) | ՀՀ պետական բյուջե<br>համայնքային բյուջե<br>օրենքով չարգելված այլ աղբյուրներ | սկսած 2014 թվականից |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ